ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԵԶ ՀՈՒՇՈՒՄ ԵՆ...

ՆԱԽԱԾԱՆՑՆԵՐ ԵՎ ՎԵՐՋԱԾԱՆՑՆԵՐ

Գիտենք, որ բառի կամ արմատի սկզբից կամ վերջից ավելացվող մասնիկները, որոնցով նոր բառեր են կազմվում, կոչվում են **ածանցներ**:

Ըստ ածանցի դիրքի՝ լինում են նախածանցավոր և վերջածանցավոր բառեր:

Արմատի կամ բառի սկզբից ավելացող ածանցը կոչվում է նախածանց, օրինակ՝ ան + գին, դժ + գոհ, արտ + երկիր:

Նախածանցավոր բառերը կազմվում են նախածանցից և արմատից (արմատներից կամ նախածանցներից և արմատից), օրինակ՝ մակերես, առողջ, անվերադարձ, անընդհատ:

Արմատի կամ բառի վերջից ավելացող ածանցը կոչվում է վերջածանց, օրինակ՝ լճ + ակ, ձմեռ + ային, հաղթ + անակ, հայ + երեն, չին + արեն:

Վերջածանցավոր բառերը կազմվում են մեկ արմատից և մեկ կամ ավելի վերջածանցից, օրինակ՝ ոսկյա, ջերմորեն, հերոսություն, մայրենի, դասարանային, գրականություն, թագավորական:

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆԻ ԱՌԱՎԵԼ ԳՈՐԾՈՒՆ ԱԾԱՆՑՆԵՐԸ

Նախածանցներ

ամենա- (ամենալավ, ամենասիրուն)
ան- (անեզր, անօգուտ)
ապ - (ապերջանիկ, ապուշ)
առ - (առողջ, առանձին)
արտ(ա)- (արտասահման, արտանկար)

բաց(ա) –(բացարձակ, բացակա)
գեր (ա) –(գերաշնորհ, գերխնդիր)
դժ–(դժկամ, դժգույն)
ենթ(ա)– (ենթակա, ենթասպա)
ընդ–(ընդմիջում, ընդմիշտ)
համ(ա)– (համազգեստ, համերգ)
մակ(ա)– (մակերես, մակագիր)
նախ(ա)– (նախաբան, նախաճաշ)
չ–(չկամ, չխոսկան)
ստոր(ա)– (ստորակարգ, ստորակետ)
վեր(ա)– (վերադարձ, վերսկսել)
տ–(տգեղ, տհաճ)
տրամ(ա) –(տրամաբան, տրամագիծ)
ց–(ցտեսություն, ցմահ)
փոխ(ա)– (փոխարքա, փոխադրել)

Վերջածանցներ

–(ա)բար (հերոսաբար, պատահաբար)
–(ա)գին (ուժգին, թախանձագին)
–(ա)գույն (նվազագույն, մեծագույն)
–ածո, – ածու, –ծու (չափածո, ժողովածու, շինծու)
–ակ (տնակ, կայծակ)
–ական (գրական, բնական)
–ակի (եզակի, եռակի)
–ային (լեռնային, խմբային)
–անակ (մրցանակ, հաղթանակ)
–(ա)նոց (ծաղկանոց, ամառանոց)
–անք (հարգանք, օրհնանք, Վարդանանք)
–(ա)պես (մշտապես, իսկապես)
–(ա)ստան (Հայաստան, ծաղկաստան)
–ավետ (ծաղկավետ, բուրավետ)
–(ա)վոր (գլխավոր, լուսավոր)
–ատ (կիսատ, պոչատ)

–ար (կերպար, հովար)
–արան (դասարան, նվագարան)
–արար (ազդարար, կենարար)
–արդ (գմբեթարդ, գեղարդ)
–ացի,–եցի,–ցի (տեղացի, գյումրեցի, երևանցի)
–ացու (հարսնացու, սերմացու)
–ացք (գնացք, սլացք)
–ե (ծղոտե, թղթե)
–եղ (ուժեղ, համեղ)
–եղեն (հրեղեն, խմորեղեն)
–ենի (թզենի, խնկենի)
–երեն,–արեն (անգլերեն, չինարեն)
–(ե)րորդ (վեցերորդ, երրորդ)
–եք (արժեք, երբեք)
–ի (վայրի, աղի)
–իլ (կաթիլ, տեսիլ)
–իկ (մանկիկ, շնիկ)
–իչ (գրիչ, երգիչ)
–լիկ (սուտլիկ, բկլիկ)
–կան (լացկան, խռովկան)
–մունք (ցուցմունք, մտածմունք)
–յա (փայտյա, արծաթյա)
–յալ (որակյալ, դարձյալ)
–յակ (հարսնյակ, հնգյակ)
–յան (ամերիկյան, արևելյան)
–յուն (հնչյուն, ոստյուն)
–ող (լրագրող, ուսանող)
–ոն (կտրոն, ծամոն)
–ովի (ընտրովի, ընկերովի)
–ովին (հիմնովին, ամբողջովին)
–ոտ (փշոտ, աղմկոտ)
–որդ (որսորդ, առաջնորդ)
–որեն (մեղմորեն, ջերմորեն)
–ոց (դպրոց, ամրոց)

–սուն (հիսուն, ութսուն)
–վածք (քայլվածք, պատմվածք)
–ու (վերարկու, կծու)
–ություն (հարստություն, հիվանդություն)
–ուկ (հանելուկ, ձիուկ)
–ուհի (հայուհի, թագուհի)
–ույթ (հասույթ, մրցույթ)
–ունք (ծաղկունք, համեմունք)
–ուչ (տեսուչ, ընկալուչ)
–ուց (նեղուց, սպիտակուց)
–ք (վազք, աղոթք)

Վերջածանցն ավելանում է ածանցող հիմքին վերջից (օրինակ՝ ծալ+ք, խայթ+ոց, հն+ոտի, մտած+կոտ, համոզ+իչ, տենչ+ալի և այլն)։ Ժամանակակից հայերենը հարուստ է վերջածանցներով։

Առաջադրանքներ

1. Հ. Կարապենցի «Վերջին կայարանը» պատմվածքից դուրս գրիր 5-ական նախածանցավոր և վերջածանցավոր բառ։

2. Տրված բառերի համար ընտրիր ընդհանուր նախածանց և դրանցով կազմիր նախածանցավոր բառեր։

Հանգիստ, *շունչ*, *հույզ*, *որոշ*, *հույս*, *հարթ*, *գուն*, *սիրտ*, *հարգի*։

3. Բնագրից դուրս գրիր տրված արմատներն ունեցող վերջածանցավոր բառեր և կազմիր նախադասություններ։

Առավոտ, *գունդ*, *գոմս*, *սիրտ*, *փոքր*, *նեղ*, *շեշտ*։

4. Կարդա՛, առանձնացրու՛ համապատասխան բառերը՝ լրացնելով աղյուսակը։

Սարերում խորացել է ոսկե աշունը։ Նարինջով, ոսկով, կրակով են ներկվել անհաղթ ծառերի տերևները, աշնան կարճացողուն խոտը, մամռապատ քարերը։ Բարակել են առու ու գետակ, այնպես են հստակվել, որ երևում է ամենաբարի արեգակի տակ ճառագայթող յուրաքանչյուր ավազահատիկ, յուրաքանչյուր զմրուխտե ջրխոտ։

Լռել է գութաներգը, վարողները նստել են ընդմիջման: Մենք շրջում ենք վերևում, անթառամ ծաղիկներ հավաքում, որ վերադարձին նվիրենք աղջիկներին, ոմանք էլ ծաղկահյուսքեր են պատրաստում: Ճանապարհահատվածն հարուստ է զուլալ, քչքչան աղբյուրներով: Բուրավետ ծաղիկների հոգեհմա բույրը տարածվել է շուրջբոլորը:

Նախածանցավոր բառեր	Վերջածանցավոր բառեր	Բարդ բառեր	Բարդածանցավոր բառեր